ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի մարտի 28-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը **«ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4»**

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «գեոդեզիական գործիքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 27.03.2019թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 29.03.2019թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1՝

Կցվում է

Պարզաբանում N 1՝

1. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններում հստակ համատեղելիության պահանջը պայմանավորված է ՀՀ ՊՆ-ում արդեն իսկ առկա համակարգերի (մասնագիտացված գործունեության) հետ համատեղելիության անհրաժեշտությամբ, որը «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 2-դ կետի 3-րդ ենթակետի (գնման առարկայի բնութագրերը պետք է համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը) պահանջի բավարարումն է:

2. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված MAF կամ DAF նամակ-հավաստագրերի պահանջը տարածվում է հրավերով սահմանված, պայմանագրի կատարման (մատակարարման) փուլի վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ սահմանվածը՝ գնման հայտում (տվյալ դեպքում հրավերում) ներառվում է գնման առարկայի բնութագրերը: Իսկ մասնավորապես ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ որակավորման փուլում պահանջվում է միայն հավաստում՝ մատակարարման փուլում այդ նշված նամակի ներկայացման վերաբերյալ:

3. Այլ մոդելների ապրանքներ՝ իրենց համապատասխան ծրագրային փաթեթներով առաջարկի դեպքում՝ դրանք համարժեք ընդունելի կլինեն առաջարկում նշված ծրագրային փաթեթները ՀՀ ՊՆ-ում առկա ծրագրերի հետ համատեղելի լինելու դեպքում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գ. Տերյանին

Հեռախոս՝* 010-29-44-18*:
Էլեկտրոնային փոստ՝ g.teryan@mil.am:
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

29.03.2019թ

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4»
ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովին

Պարզաբանման դիմում

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 13-րդ հոդվածի պահանջների համաձայն.

<<2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.>>

<<5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: >>

Հրավերով սահմանված չափաբաժիններում կատարված են հղումներ կոնկրետ ապրանքային նշանների, որը սահմանափակում է համարժեք ապրանքների մասնակցությունը ընթացակարգին: Մասնավորապես.

-1-ին չափաբաժնում նշված է <<Trimble M3 DR 5″ մակնիշի կամ համարժեք տախեոմետր, որի աշխատանքը պետք է համատեղելի լինի Trimble M3 DR 5″ ծրագրային արտոնագրված համակարգի հետ >>: Այստեղ <<կամ համարժեք>>-ի գաղափարը կիրառված է ապրանքի մոդելի վրա, սակայն կիրառված չէ ծրագրային փաթեթի վրա: Հնարավոր չէ վերցնել մի արտադրողի ապրանքը և դրան համադրել մեկ այլ արտադրողի ծրագրային փաթեթ, և նույնիսկ անիմաստ, քանի որ յուրաքանչյուր արտադրողը ապրանքի հետ միասին տրամադրում է նաև դրան համապատասխան արտոնագրված ծրագրային փաթեթը: Արդյունքում ստացվում է, որ կոնկրետ Trimble M3 DR 5″ ծրագրային արտոնագրված համակարգին հղում կատարելով պարտադրվում է մատակարարել միայն Trimble M3 DR 5″ մակնիշի Տախեոմետր: Դա հանդիսանում է մասնակցության սահմանափակում և հղում կոնկրետ աղբյուրի:

- Նույն մոտեցումը կիրառված է նաև 2-րդ չափաբաժնում, որտեղ նշված է հետևյալը

<<**<u>Ներոնկարահանող սարքը՝</u>** DJI Phantom 4 RTK մակնիշի կամ համարժեք, որի աշխատանքը պետք է համատեղելի լինի Pix4D Mapper և FOTOMOD ծրագրային փաթեթների հետ>>,

<<**<u>Օդային մոնիտորինգի համակարգը՝</u>** Matrice 210 RTK կամ համարժեք, որի աշխատանքը պետք է համատեղելի լինի Pix4D Mapper և FOTOMOD ծրագրային փաթեթների հետ:>>, <<Համալիրը ներառում է նաև տվյալների ֆոտոգրամետրիկ մշակման Pix4D Mapper ծրագրային արտոնագրված փաթեթ>>

- Նույնը նաև 3-րդ չափաբաժնում է

<u><<Ընդունիչը՝</u> Trimble R10 մակնիշի կամ համարժեք ընդունիչ, որի աշխատանքը պետք է համատեղելի լինի Trimble TSC3 կոնտրոլեր սարքի հետ>>, <<**<u>Հսկման սարքը՝</u>** կոնտրոլեր Trimble TSC3 իր արտոնագրված ծրագրային Trimble Business Center-2.50 փաթեթով կամ համարժեք դաշտային գեոդեզիական սարք՝ կոնտրոլեր իր արտոնագրված ծրագրային փաթեթով, որը համատեղելիության կարգով կաշխատի Trimble R10 մակնիշի գեոդեզիական ընդունիչի հետ>>

Ընդունիչի բնութագրում կոնկրետ հղում է կատարվել հսկման սարքավորմանը և ընդհակառակը, հսկման սարքավորման բնութագրում հղում կատարվել կոնկրետ ընդունիչին, այդպիսով սահմանափակելով որևէ այլ մոդելի նմանատիպ և համարժեք ապրանքի առաջարկվելուն:

Բացի վերը նշված խնդիրներից, բոլոր երեք չափաբաժիններում էլ ներառված է հետևյալ պայմանը.

<<Անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր և օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin):>>

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (Այսուհետև՝ Կարգ) 21-րդ կետի համաձայն 1-ի ենթակետի ա) պարբերությամբ նշված է հետևյալը. <<Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:>>

Գտնում ենք, որ հրավերով MAF և DAF փաստաթղթեր պահանջելով խախտվել է Կարգի պահանջները, ինչպես նաև Օրենքի պահանջները՝ առաջացնելով մասնակցության սահմանափակում:

Ամփոփելով նշվածները պահանջում ենք ձեզ

1- կատարել հրավերի փոփոխություն, այնտեղից հանելով MAF և DAF փաստաթղթերի ներկայացման պահանջները,

2- կոնկրետ մոդելների ապրանքներին և ծրագրային փաթեթներին կատարված հղումների հետ միասին (որտեղ որ նշված չեն <<կամ համարժեք>> բառերը) կիրառել <<կամ համարժեք>> բառերը:

Խնդրում ենք տալ պարզաբանում հետևյալ հարցին.

-եթե ձեզ առաջարկվի այլ մոդելի ապրանքներ՝ իրենց համապատասխան ծրագրային փաթեթներով, որոնք (և ապրանքները, և ծրագրային փաթեթները) ըստ համապատասխան չափաբաժնի կիրառելի են միմյանց հետ և համապատասխանում են տեխնիկական բնութագրերում նշված տեխնիկական ցուցանիշներին (երբեմն նույնիսկ առավել), ապա կհամարվի արդյոք առաջարկված ապրանքը համարժեք ընդունելի Պատվիրատուի կողմից, թե ոչ: